ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԱՐԱՄՅԱՆ ԻՐԻՆԱ ԱՐԹՈՒՐԻ

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАРАМЯН ИРИНА АРТУРОВНА

«ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ НОВЕЙШИХ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ»

Диссертация на соискание ученой степени кандидата
политических наук по специальности
23.00.02 – «Политические институты и процессы»

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Դավթյան Վահե Սամվելի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ենգոյան Աշոտ Փայլակի**
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ղևոնդյան Ալեն Գուրգենի**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարի 12–ին՝ ժամը 15:30-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2026 թ. հունվարի 07-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в Ереванском Государственном университете.

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Давтян Ваге Самвелович**
Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Енгоян Ашот Пайлакович**
кандидат политических наук, доцент **Гевондян Ален Гургенович**

Ведущая организация: **Академия государственного управления Армении**

Защита диссертации состоится 12-го февраля 2026 г. в 15:30 на заседании специализированного совета 056 «Политология и международные отношения» КВОН МОНКС РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, РА.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.
Автореферат разослан 07-го января 2026 г.

Ученый секретарь специализированного совета
056 КВОН МОНКС РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սրընթաց զարգացող տեխնոլոգիաների դարաշրջանում, տեղեկատվական և հաղորդակցական միջոցների զարգացմանը զուգահեռ, մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտները ենթարկվել են զգալի փոփոխությունների: Համացանցի ընդլայնումը ձևավորել է փոխգործակցության լայնածավալ վիրտուալ միջավայր, որտեղ թվային տեխնոլոգիաները դարձել են քաղաքական հաղորդակցության առանցքային մեխանիզմ: Արդյունքում՝ ցանցային հաղորդակցությունն ազդել է հանրային գիտակցության կառուցման մոդելների վրա՝ թույլ տալով հաղորդակցությամբ զբաղվողներին արդյունավետորեն ձևավորելու քաղաքական իրականության հանրային ընկալումներ և հաստատելու վարքային նոր մոդելներ: Մեր օրերում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաներն ակտիվորեն կիրառվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական կառավարման գործընթացներում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ժամանակակից ցանցային տարածքում հաղորդակցման մոդելների օգտագործումն ունի իր առանձնահատկությունները և էականորեն տարբերվում է ավանդական մեդիա տարածքից: Կարևոր է նշել, որ ժամանակակից ցանցային տարածքը բնորոշվում է իր մանիպուլատիվ բնույթով, որով էլ հաճախ ձևավորվում է վիրտուալ քաղաքական աղավաղված իրականություն:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ սոցիալ-քաղաքական ժամանակակից գործընթացները (արագ թվայնացում, տեղեկատվական առճակատում, COVID-19, տեխնոտնտեսական հարթակների աճող մրցակցություն) լուրջ մարտահրավերներ են հանդիսանում պետության համար, որոնց դիմակայումը պահանջում է արդյունավետ արձագանքի մշակում: Քաղաքական ընթացիկ փոխակերպումների համապատկերին առանձնահատուկ նշանակություն է ստանում առանձին պետությունների միջև աճող տեղեկատվական մրցակցությունը, որը ծավալվում է գլոբալացված մեդիա տարածքում: Այս միջավայրը ցույց է տալիս ազգային և գաղափարախոսական գծերով բևեռացման ակնհայտ միտում, որը թույլ է տալիս պետություններին գիտակցաբար կառուցել իրենց սեփական խորհրդանշական կարգավիճակը՝ ներկայանալով որպես եզակի քաղաքակրթական միավորներ, որոնք ունակ են փոխանցելու համընդհանուր արժեքներ և սահմանելու գլոբալ փոխակերպման գործընթացների ուղղություն:

Քննարկվող հարցի համատեքստում պետք է ընդգծել, որ պետական կառավարման բարեփոխումները անհրաժեշտ են ժամանակակից և արդյունավետ համակարգ ստեղծելու համար, համակարգ, որը կարող է արդյունավետ լուծումներ տալ պետական և հասարակական խնդիրներին, ինչը կարևոր է պետության և

քաղաքացիների միջև արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար: Էլեկտրոնային կառավարման զարգացումը Հայաստանում պետական կառավարման բարեփոխումների կարևոր բաղադրիչներից է: Անհրաժեշտ բարեփոխումները ներառում են նաև միասնական իրավական շրջանակի ստեղծումն ու տեղեկատվական ու հաղորդակցական նախադրյալների մշակումը՝ տեղեկատվական հոսքի շարունակականությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Վերոնշյալի հիման վրա էլ հետազոտության թեման արդիական է համարվում:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Աշխատանքի ուսումնասիրության տեսական և տեղեկատվական հիմքում ընկած են ժամանակակից մի շարք հեղինակների ուսումնասիրությունները: Քաղաքական հաղորդակցության երևույթն ուսումնասիրելիս անդրադարձ է կատարվել Գ. Լասվելի[1], Վ. Լիպմանի [2] և Ջ. Հաբերմասի [3] աշխատություններին: Քաղաքական հաղորդակցության և ժամանակակից հասարակության գործունեության մեջ դրանց դերի ուսումնասիրության գործում հատուկ ներդրում է ունեցել Մ. Մաքլյուէնը [4]:

Վերջին տասնամյակների ռուս հետազոտողները զգալի դեր են խաղացել հասարակության քաղաքական հաղորդակցության գործընթացների տեսական ուսումնասիրության գործում. նրանցից են Գ. Ակոպովը [5], Ա. Բորիսովը [6], Ս.

---

[1] Lasswell H.D. The structure and function of communication in society // The Communication of Ideas / Ed.: L. Bryson. – New York: Harper and Brothers, 1948 –P. 37–51.

[2] Липпманн У. Общественное мнение/Пер. с англ. Т.В. Барчуновой. – М.: Институт Фонда «Общественное мнение», 2004. –384 с.

[3] Хабермас Ю. Демократия. Разум. Нравственность. – М.: Наука, 1992. – 176 с. – С.31–55.

[4] Маклюэн М. Понимание медиа: Внешнее расширение человека / Пер. с англ. В. Николаева. – М.: Гиперборея, 2007. – 464 с.

[5] Акопов Г.Л. Политические интернет-коммуникации как инновационный фактор общественного развития: дис. на соискание учен. ст. д. полит. наук: 23.00.02. –М. 2013. –336 с.

[6] Борисов А.Ю. Государственная политика в области обеспечения информационной безопасности на современном этапе: дис. на соискание учен. ст. к. полит. наук: 23.00.02. –М. 2006. –166 с.

Գաբուևը[7], Ա. Կոնկովը,[8] Մ. Նազարովը[9], Ա. Սոլովյովը[10], Պ. Ցիգանկովը[11], Ս. Վոլոդենկովը[12], Ս. Ֆեդորչենկոն[13]:

Ժամանակակից հաղորդակցության բնագավառում հասարակության զարգացման վրա տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով դիտարկել ենք Դ. Բելլի[14], Մ. Կաստելսի[15], ինչպես նաև տեղեկատվական հասարակության տեսության ներկայացուցիչների (Ֆ. Վեբսթեր[16], Է. Թոֆլերի [17]) աշխատությունները:

Քաղաքական գործընթացների կառավարման մեջ ժամանակակից քաղաքական հաղորդակցության մանիպուլատիվ և քարոզչական ասպեկտների ուսումնասիրության քննությանն են նվիրված Ի. Ձյալոշինսկու[18], Գ. Պոչեպցովի[19],

---

[7] Габуев С.В. «Электронное правительство»: Проблемы эффективности политического управления (сравнительный анализ российского и мирового опыта): диссертация на соискание ученой степени кандидата политических наук // –М. 2018. –225 с.

[8] Коньков А.Е. Цифровизация политики vs политика цифровизации. Вестник Санкт-Петербургского университета. Международные отношения. 2020. Том 13 № 1. С. 47–68. https://doi.org/10.21638/spbu06.2020.104

[9] Назаров М.М. Массовая коммуникация в современном мире: методология анализа и практика исследований. – М.: Едиториал УРСС, 2002. – 240 с.

[10] Соловьев А.И. Политическая коммуникация: к проблеме теоретической идентификации // Полис. 2002. № 3. С. 5–18; Политические коммуникации / Под ред. А.И. Соловьева. – М., 2004. –332 с.;

[11] Цыганков П.А. Международные процессы в условиях глобализации: проблема эффективной коммуникации // Вестник Московского университета. Сер.: Социология и политология. – 1999. № 4. С. 56–65

[12] Володенков С.В. Интернет-коммуникации в глобальном пространстве современного политического управления. – М.: Изд-во Московского университета; Проспект, 2015. -272 с.

[13] Володенков С.В., Сидорович А.В., Щербинин А.И., Манойло А.В., Федорченко С.Н., Зверев А.Л., Митева В.В., Подрезов М.В., Федоров В.И. Новые субъекты и технологии государственной политики: актуальная практика и перспективы // Журнал политических исследований. 2021. №. 1. С. 65-91. DOI: https://doi.org/10.12737/2587-6295-2021-5-1-65-91 (дата обращения: 28.10.2025).

[14] Белл Д. Грядущее постиндустриальное общество. Пер. с англ. под ред. В. Л. Иноземцева. – М.: Academia, – 1999. – 783 с.

[15] Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура / Пер. с англ.; под науч. ред. О.И. Шкаратана. – М.: ГУ ВШЭ, 2000. – 606 с.

[16] Уэбстер Фрэнк Теории информационного общества. Пер. с англ. М. В. Арапова, Н. В. Малыхиной; Под. ред. Е. Л. Вартановой. — М.: Аспект Пресс, 2004. – 400 с.

[17] Тоффлер Э. Третья волна. – М.: АСТ, 2004. – 781 с.; Тоффлер Э. Шок будущего. – М., АСТ, 2002. –557 с.

[18] Дзялошинский И.М. Коммуникативное воздействие: мишени, стратегии, технологии. –М.: НИУ ВШЭ, 2012. – 572 с.

[19] Почепцов Г.Г. Информационные войны. – М.: РЕФЛ–БУК ВАКЛЕР, 2000. –574 с.

Ս. Կարա-Մուրզայի [20], Վ. Պուգաչևի [21] աշխատությունները: Կարևորվում է հատկապես Մ. Անոխինի աշխատանքը [22], որը դիտարկում է ժամանակակից քաղաքական պրակտիկայում ցանցային հաղորդակցության տեխնոլոգիաների ներդրման խնդիրները:

Ուսումնասիրության կիրառական հիմքը: Սույն աշխատանքի էմպիրիկ բաղադրիչը հիմնված է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում Հայաստանի Հանրապետության փորձի ուսումնասիրության վրա և ներառում է պաշտոնական այնպիսի աղբյուրների և փաստաթղթերի ուսումնասիրություն, ինչպիսիք են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը [23], «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը [24], «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը[25], ՀՀ Սահմանադրությունը [26], ՀՀ կառավարության որոշումը ՀՀ թվայնացման ռազմավարությունը հաստատելու մասին [27], Վ. Աթոյանի աշխատանքները[28] և այլն:

---

[20] Кара–Мурза С.Г. Манипуляции сознанием. – М.: Эксмос, 2007. – 862 с.

[21] Пугачев В.П. Информационный тоталитаризм как перспектива либеральной демократии XX века // На рубеже веков. – 1997. № 4. С. 45–54.

[22] Анохин М.Г. Информационно–коммуникативные технологии в политике // Вестник РУДН. – 1999. № 1. С.40–52.

[23] Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն 2020թ. URL:https://mil.am/files/LIBRARY/Стратегия%20национальной%20безопасности%20Республики%20Армения%202020.pdf (մուտք՝ 20.08.2020):

[24] Закон о государственной поддержке сферы информационных технологий. Принят 17 декабря 2014 г. [Электронный ресурс]. URL: https://ictstat.am/ru/legislation (дата обращения: 16.09.2021).

[25]«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2015 թվականի մայիսի 18-ին: Հասանելի է՝ URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=114851 (մուտք՝ 28.09.2021).

[26] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական կայք: URL: https://www.president.am/ru/constitution-2015/ (մուտք՝ 06.02.2021) :

[27] Հայաստանի Հանրապետության թվայնացման ռազմավարության, ռազմավարական միջոցառումների եւ կատարողականի ցուցանիշների ծրագրի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը // [Электронный ресурс]. URL: https://www.arlis.am/hy/acts/149957 (մուտք՝ 28.08.2025)

[28] Աթոյան Վ., Մեծ կերպափոխում. թվային ապագայի մարտահրավերները, «Ամբերդ» տեղեկագիր, N1, 2019, էջ 50-53: https://hal.science/hal-03261245v1/document; Atoyan V. Challenges of Information Security in the Context of New World Order Formation: View from Armenia. 2014. ALMANACH VIA EVRASIA. Available at SSRN: https://ssrn.com/abstract=3856632; Atoyan Vardan, Dadayan Lilit. Տեղեկատվական-հաղորդակցական անվտանգության ապահովման արդի խնդիրների շուրջ. Messenger of ASUE, 2015, 3 (39), P.136-150.

Ուսումնասիրության էմպիրիկ հիմքում են նաև համացանցի հայկական, ռուսական և միջազգային հատվածների սոցիալ-քաղաքական և տեղեկատվական պորտալներից վերցված բազմազան տվյալներ, տեքստային և մուլտիմեդիա նյութեր, թեմատիկ առցանց խմբերի հրապարակումներ, ինչպես նաև սոցցանցերի օգտատերերի կողմից ստեղծված նյութեր, որոնք արտացոլում են մերօրյա դիսկուրսիվ պրակտիկան:

Հետազոտության օբյեկտը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացն է քաղաքական կառավարման ժամանակակից համակարգի համատեքստում:

Հետազոտության առարկան առարկան ցանցային տեխնոլոգիաների և թվային հաղորդակցման ռեսուրսների կոնկրետ կիրառումն է Հայաստանի Հանրապետության ժամանակակից քաղաքական և կառավարման պրակտիկայում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ժամանակակից կառավարման գործընթացներում և որոշել դրանց ներդրմանն ուղեկցող հիմնական դժվարություններն ու խնդիրները ՀՀ քաղաքական պրակտիկայում:

Այս նպատակներն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- **բնութագրել** ցանցային հաղորդակցության զարգացման հստակ պարամետրերը, որոնք որոշում են դրանց տարբերությունը քաղաքական փոխգործակցության ավանդական ձևերից,
- **վերլուծել** ժամանակակից թվային հաղորդակցության տեխնոլոգիաների գործառույթներն ու ներուժը սոցիալ-քաղաքական փոխգործակցության նոր մոդելների ձևավորման գործում,
- **ուսումնասիրել** ՀՀ ժամանակակից քաղաքական կառավարման համակարգում ցանցային տեխնոլոգիաների ներդրման և կիրառման պրակտիկան, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը վարչական որոշումների բնույթի վրա,
- **բացահայտել** 21-րդ դարասկզբի քաղաքական հաղորդակցության հիմնական ուղղությունները և պարզել, թե ինչպես են այդ փոխակերպումները նպաստում թվային գործիքների ինտեգրմանը հանրային կառավարման ժամանակակից ճարտարապետությանը,
- **որոշել** տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ՀՀ քաղաքական գործընթացների կառավարման գործում,

- **բացահայտել** սոցիալական ցանցերի կարևորությունը ՀՀ քաղաքական գործընթացների կառավարման գործում,
- **քննել** էլեկտրոնային ժողովրդավարության առանցքային առանձնահատկությունները և գնահատել դրանց գործնական կիրառման հեռանկարները ՀՀ քաղաքական կառավարման համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության նպատակներով և խնդիրներով պայմանավորված՝ հաղորդակցման գործընթացների առանձնահատկություններն ուսումնասիրելու համար օգտագործվել են մեթոդական գործիքներ, որոնք ուղղված են առաջնային տեղեկատվական համակարգերի մշակմանը: Բովանդակային վերլուծության և իրադարձությունների վերլուծության կիրառումը հնարավորություն է տվել մանրամասնորեն արդյունահանելու և հետագայում մեկնաբանելու մեծածավալ էմպիրիկ տվյալներ, ինչպես նաև «դեպքի ուսումնասիրության» («Case-study») մեթոդը, որն օգտագործվել է տարբեր երկրներում պետական կառավարման մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման առանձին օրինակների ուսումնասիրության ժամանակ:

Տեղեկատվական հասարակության զարգացման փուլերը բացահայտելու համար կիրառվել են պատմական և համեմատական մեթոդները:

Կոնվերգենտ (զուգամիտող) մոտեցումը հնարավորություն է տվել տեղեկատվական տեխնոլոգիաները դիտարկել որպես առանձին տարրերի՝ թվային մեդիայի, հեռահաղորդակցության և համակարգչային տեխնոլոգիաների միասնական համակարգ:

Օգտագործվել է նաև դիտողական հետազոտություն: Հայաստանում թվային կառավարման մի քանի հաջողված նախաձեռնությունների գործնական իրականացման ուսումնասիրությունը թույլ է տվել կիրառել փորձարարական տվյալներ, գնահատել այդ ոլորտում կայացված որոշումների արդյունավետությունը, բացահայտել ռիսկերը և առաջարկներ անել երկրի հետագա թվային վերափոխման համար:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Առաջին անգամ փորձ է արվում համակողմանի վերլուծել քաղաքական կառավարման բարեփոխումները ՀՀ սոցիալ-քաղաքական գործընթացներում թվային տեխնոլոգիաների աճող դերի համապատկերին, ինչպես նաև գնահատել քաղաքական կառավարման արդյունավետությունը էլեկտրոնային կառավարման մեխանիզմների ներդրման համատեքստում:

2. Առաջին անգամ քաղաքական կառավարումը դիտարկվում է որպես հասարակական-քաղաքական հարաբերությունների տեղեկատվական և հաղորդակցական կարգավորման ձև, որը հիմնված է թվային տեխնոլոգիաների և ցանցային հաղորդակցության կիրառման վրա, ինչը հնարավորություն է տվել ոչ միայն բացահայտել դրա էական առանձնահատկությունները, այլև վերլուծել հաղորդակցման գործընթացների կարևորությունը քաղաքական փոխգործակցության արդյունավետության բարձրացման գործում:

3. Հստակեցվում է «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը՝ հաշվի առնելով ժամանակակից քաղաքական կառավարման առանձնահատկությունները, բացահայտվում են դրա՝ որպես պետության և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցության նոր ուղիներ ձևավորող սոցիալ-տեխնիկական համակարգի բնորոշ գծերը:

4. Ներկայացվում է քաղաքական կառավարման մեջ թվային հաղորդակցության գործիքների կիրառության տեսականորեն հիմնավորված մոդել, որը ներառում է ինչպես էլեկտրոնային մասնակցության ինտերակտիվ ձևերը, այնպես էլ էլեկտրոնային ժողովրդավարության տարրերը, մանիպուլատիվ տեխնոլոգիաների և ապատեղեկատվական ռազմավարությունների բաղադրիչները:

5. Բացահայտվում են այն մեխանիզմները, որոնց միջոցով թվային հաղորդակցությունը, մասնավորապես համացանցը և սոցիալական լրատվամիջոցները ազդում են հանրային գիտակցության ձևավորման և վերափոխման վրա. ընդգծվում են քաղաքական նպատակներով դրանց օգտագործման հնարավորություններն ու ռիսկերը:

6. Արձանագրվում են ժամանակակից ՀՀ-ում քաղաքական կառավարման համակարգի թվայնացման բնութագրերն ու հակասությունները. ուրվագծվում են թվային կառավարման գործիքների արդյունավետ ներդրմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ, տեխնոլոգիական և սոցիալ-մշակութային խոչընդոտները:

7. Էմպիրիկ տվյալների և վերլուծական դիտարկումների հիման վրա պարզաբանվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման ժամանակ՝ ընդգծելով թվային հաղորդակցությունների դերը քաղաքական կառավարման համակարգի բարելավման գործում՝ քաղաքական գործընթացների դինամիկ փոփոխությունների համապատկերին:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական նշանակությունը ժամանակակից հասարակության

թվային վերափոխման, քաղաքական կառավարման հայեցակարգային ըմբռնումների խոր ուսումնասիրության և պարզաբանման փորձն է: Քաղաքական կառավարումը քննվում է որպես սոցիալական հարաբերությունների տեղեկատվական և հաղորդակցական կարգավորման գործընթաց: Աշխատանքը լրացնում է ՀՀ-ում քաղաքական գործընթացների ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական շրջանակը քաղաքական հաղորդակցության և պետական կառավարման թվայնացման առումներով:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը դրա արդյունքների կիրառման հնարավորությունն է պետական ինստիտուտների և հասարակության միջև քաղաքական կառավարման, տեղեկատվական քաղաքականության և հաղորդակցության փոխգործակցության մեխանիզմների կատարելագործման համար: Հետազոտության եզրակացությունները կարող են իրականացվել հանրային կառավարման թվայնացման ծրագրերի, ինչպես նաև պետական մարմինների քաղաքական հաղորդակցության ռազմավարությունների մշակման շրջանակներում: Ուսումնասիրության արդյունքները կարող են գործնականում կիրառվել տարբեր քաղաքական դերակատարների կողմից սոցիալ-քաղաքական գործընթացների վերլուծության և կանխատեսման համար: Աշխատանքի որոշ դրույթներ կարող են նպաստել ՀՀ տեղեկատվական անվտանգության բնագավառում իրավական կարգավորման վերափոխմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են Հայ-Ռուսական համալսարանի Կ. Միրումյանի անվ. քաղաքագիտության ամբիոնում: Ատենախոսության մեջ մշակված մոտեցումներն ու դրույթները օգտագործվել են Հայ-ռուսական համալսարանում «Քաղաքական կառավարում», «Քաղաքական տեխնոլոգիաներ» և «Քաղաքական PR» դասընթացների մշակման և դասավանդման ժամանակ, ինչպես նաև մի շարք միջազգային գիտաժողովների, կլոր սեղանների և սեմինարների զեկույցներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են գիտական տասը հոդվածում (6-ը՝ ՀՀ և ՌԴ ԲՈԿ-երի կողմից ընդունելի գիտական պարբերականներում, 4-ը՝ գիտաժողովի նյութերի ժողովածուներում) և համահեղինակությամբ գրված մեկ աշխատության մեջ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմված է 112 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության մշակվածության աստիճանը, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝ «Քաղաքական կառավարման մեջ հաղորդակցման գործընթացների ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

1.1. «Տեղեկատվական տեխնոլոգիաները քաղաքականության մեջ. էությունը, հիմնական մոտեցումները, դասակարգումը» ենթագլխում ուսումնասիրվել են քաղաքականության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների էությունն ու բովանդակությունը՝ «տեխնոլոգիա», «քաղաքական տեխնոլոգիաներ» և «տեղեկատվական տեխնոլոգիաներ» հասկացությունները հասկանալու հիմնական տեսական մոտեցումների վերլուծության միջոցով, ինչպես նաեւ դրանց փոխկապակցվածությունը: Վերլուծվել են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման զարգացումը և ընդլայնումը քաղաքական գործունեության մեջ, այդ թվում՝ կառավարման, ընտրական գործընթացների և էլեկտրոնային կառավարման հայեցակարգերի ներդրման: Հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքականության մեջ տեղեկատվական (ներառյալ ավանդական և նոր (թվային)) տեխնոլոգիաների դասակարգմանը, ինչպես նաև քարոզչության և մարքեթինգային գործիքների տարբերակմանը: Ընդգծվել է քաղաքականության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների բարդ բնույթի, քաղաքական կառավարման եւ հաղորդակցության արդյունավետության ապահովման գործում դրանց առանցքային դերի մասին:

1.2. «Տեղեկատվական հասարակությունը արդյունաբերական չորրորդ հեղափոխության արդյունք» ենթագլխում բացահայտվում են օտարերկրյա և հայրենական հետազոտողների աշխատանքներում «տեղեկատվական հասարակություն» հասկացության մեկնաբանման և էվոլյուցիայի հիմնական տեսական մոտեցումները: Վերլուծվում է դրա կապը «հետինդուստրիալ հասարակություն» և «ցանցային հասարակություն» հասկացությունների հետ, ընդգծվում է տեղեկատվականության, գիտելիքի և թվային տեխնոլոգիաների՝ որպես ժամանակակից զարգացման ռազմավարական ռեսուրսների վճռորոշ դերը: Հատուկ ուշադրություն է դարձվում թվայնացման ազդեցության ներքո ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական և կառավարման գործընթացների վերափոխմանը, աշխատանքի, անհավասարության, հանրային քաղաքականության և անվտանգության փոփոխություններին: Եզրակացվում է՝ տեղեկատվական հասարակությունը ձևավորվում է ոչ այնքան տեղեկատվության ծավալների աճով, որքան տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացմամբ, որը հնարավորություն է տալիս իրականացնելու սոցիալական և կառավարման համակարգային վերափոխումներ:

1.3. «Քաղաքական կառավարումը որպես ժամանակակից սոցիալական հարաբերությունների տեղեկատվական և հաղորդակցական կարգավորման գործընթաց» ենթագլխում նշվում է տվյալ գործընթացում իրականացվող հարկադրանքի և համոզման համադրության մասին: Հիմնավորվում է քաղաքական հաղորդակցության հիմնական դերը իշխանության օրինականության և կառավարական որոշումների արդյունավետության ապահովման գործում՝ ընդգծելով հասարակական գիտակցության և զանգվածային վարքագծի վրա դրա ազդեցությունը: Վերլուծվում են հաղորդակցության դասական և ժամանակակից տեսական մոդելները, որոնք թույլ են տալիս բացահայտելու քաղաքական կառավարման մեջ տեղեկատվական ազդեցության առանձնահատկությունները: Եզրակացվում է, որ տեղեկատվական հասարակությունում հաղորդակցության տեխնոլոգիաները դառնում են քաղաքական կառավարման համակարգաստեղծ տարր և իշխանության ձևավորման և փոխանցման կարևորագույն գործիք:

Երկրորդ՝ «Քաղաքական կառավարման մեջ հանրային գիտակցության վրա հաղորդակցական ազդեցության թվային գործիքները» գլուխը նվիրված է ժամանակակից քաղաքական կառավարման համակարգում հանրային գիտակցության վրա հաղորդակցման թվային գործիքների ազդեցության վերլուծությանը: Ուսումնասիրվում է «էլեկտրոնային ժողովրդավարություն» երևույթը՝ որպես պետության և քաղաքացիների միջև ինստիտուցիոնալացված փոխգործակցության ձև, բացահայտվում են դրա գործնական կիրառման հիմնական խնդիրներն ու սահմանափակումները: Հատուկ ուշադրություն է դարձվում թվային տեխնոլոգիաների և ցանցային հարթակների ազդեցության տակ քաղաքական հաղորդակցության փոխակերպմանը: Դիտարկվում են առցանց տիրույթում հանրային գիտակցության մանիպուլյացիայի տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են որպես քաղաքական կառավարման գործիքներ:

2.1. «Էլեկտրոնային ժողովրդավարությունը և դրա կիրառման մարտահրավերները» ենթագլխում վերլուծվում է «էլեկտրոնային ժողովրդավարություն» երևույթը՝ որպես քաղաքական գործընթացների թվայնացման արդյունք և տեղեկատվական հասարակության հիմնական դրսևորումներից մեկը: Դիտարկվում են քաղաքացիների էլեկտրոնային մասնակցության հիմնական ձևերն ու գործիքները, առաջին հերթին՝ էլեկտրոնային եւ համացանցային քվեարկությունը, ինչպես նաև Էստոնիայի, Ղազախստանի եւ արևմտյան մի շարք երկրների օրինակով դրանց կիրառման միջազգային փորձը: Հատուկ ուշադրություն է դարձվում էլեկտրոնային ընտրական տեխնոլոգիաների ներդրման խնդիրներին եւ ռիսկերին, այդ թվում՝ կիբեռանվտանգության, իրավական կարգավորման, ինստիտուցիոնալ հասունության և հանրային վստահության հարցերին: ՀՀ օրինակով հիմնավորվում է այն եզրակացությունը, որ էլեկտրոնային ժողովրդավարության հաջող գործունեությունը հնարավոր է միայն զարգացած ժողովրդավարական ինստիտուտների, արդյունավետ

իրավական դաշտի և տեղեկատվական տեխնոլոգիաների կայուն ենթակառուցվածքների առկայության դեպքում:

2.2. «Հանրային գիտակցությունը մանիպուլյացիայի ենթարկող տեխնոլոգիաները որպես քաղաքական կառավարման գործիք» ենթագլխում ցանցային տիրույթում հանրային գիտակցությունը մանիպուլացնող տեխնոլոգիաները դիտարկվում են որպես քաղաքական կառավարման կարևոր գործիք: Վերլուծվում են զանգվածային լսարանի վրա տեղեկատվության ազդեցության հիմնական մեխանիզմները, այդ թվում՝ ֆրեյմինգը, սոցիալական ցանցերի և բոտերի օգտագործումը: Հիմնավորված է թվային հաղորդակցության մանիպուլատիվ ներուժի աճի և դրանց ազդեցության վերաբերյալ եզրակացությունը:

Երրորդ՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանի քաղաքական գործընթացներում» գլխում դիտարկվում են ՀՀ-ում քաղաքական կառավարման համակարգի բարեփոխման խնդիրները թվայնացման ներկա փուլում, ինչպես նաև վերլուծվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի դերը Հայաստանում քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման ժամանակ:

3.1. «Քաղաքական կառավարման համակարգի բարեփոխման խնդիրները Հայաստանում ներկա փուլում. թվայնացման մարտահրավերները» ենթագլխում վերլուծության է ենթարկվում Հայաստանի պետական կառավարման թվային վերափոխումը, որը ներառում է ռազմավարությունների մշակումը և հանրային ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակների ներդրումը: Ընդգծվում են այնպիսի հիմնական նվաճումներ, ինչպիսիք են ծառայությունների և թվային նույնականացման ազգային հարթակի ստեղծումը, ինչպես նաև առկա մարտահրավերները, այդ թվում՝ որակյալ անձնակազմի պակասը, կիբեռանվտանգության խնդիրները և բնակչության շրջանում թվային գրագիտության ցածր մակարդակը: Ընդգծվում է, որ հաջող թվայնացումը պահանջում է համապարփակ մոտեցում, որը համատեղում է տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ և կրթական միջոցառումները:

3.2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը Հայաստանի քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման գործում» ենթագլխում ընդգծվում է տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կարևորությունը արագ արձագանքման ապահովման, ռեսուրսների մոբիլիզացման և սոցիալական կայունության պահպանման գործում: Վերլուծվում է թվայնացման ազդեցությունը քաղաքական և հաղորդակցական միջավայրի վերափոխման, ճգնաժամային կառավարման ժամանակ մեծաքանակ տվյալների, սոցիալական մեդիայի և բջջային հավելվածների օգտագործման վրա՝ վեր հանելով տեղեկատվական անվտանգության հետ կապված հիմնական խնդիրները: Ընդգծվում է, որ թվային տեխնոլոգիաները հանդես են գալիս որպես ռազմավարական ռեսուրս, որը որոշում է պետության դիմադրողականությունը և ճգնաժամային կառավարման արդյունավետությունը:

3.3. «Սոցիալական ցանցերը Հայաստանի քաղաքական գործընթացների կառավարման մեջ» ենթագլուխը քննում է սոցցանցերի դերը Հայաստանում քաղաքական գործընթացների կառավարման գործում՝ կենտրոնանալով թվային տեխնոլոգիաների ազդեցությամբ քաղաքական հաղորդակցության փոխակերպման վրա: Սոցիալական մեդիան տեղեկացնելու, մոբիլիզացնելու, հասարակական կարծիքը և քաղաքական առաջնորդների կերպարը ձևավորելու հիմնական գործիքներից է, սակայն ստեղծում է նաև ապատեղեկատվության, կիբեռսպառնալիքների և հասարակական բևեռացման ռիսկեր: Ամփոփելով՝ նշվում է, որ սոցիալական մեդիայի արդյունավետ օգտագործումը պահանջում է համապարփակ մոտեցում, որը համատեղում է տեխնոլոգիական զարգացումը, իրավական կարգավորումը և քաղաքական մշակույթի ամրապնդումը թվային տարածքում:

Ատենախոսության եզրակացությունում արված եզրահանգումները հետևյալներն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հանրային կառավարման և քաղաքական գործընթացների ոլորտում անխուսափելի գործընթաց է: Տեղեկատվական և հաղորդակցական ոլորտում տեխնոլոգիական փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել հասարակության զարգացման վրա: Համացանցի ի հայտ գալու և զարգացման հետ մեկտեղ թվային հաղորդակցությունը սկսեց համապարփակ դեր խաղալ հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում՝ հաճախ ստանձնելով ընթացիկ գործընթացների կազմակերպումը: Ժամանակակից հասարակության տնտեսական և քաղաքական հիմնական արժեքն են դառնում հաղորդակցական կապերն ու հաղորդակցման հնարավորությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է որոշումների կայացման գործում քաղաքացիների մասնակցության ընդլայնմանը և կառավարման համակարգի վերանայմանը ավելի մեծ արդյունավետության ուղղությամբ: Նվազում է ավանդական գաղափարախոսական ազդեցության ներուժը: Էլեկտրոնային տեղեկատվական ուղիներն ընդլայնում են հասարակական կարծիքի վրա ազդելու հնարավորությունները, վերափոխում այն:

2. Յուրաքանչյուր պետություն դեպի տեղեկատվական հասարակության շարժվում է իր ուրույն ճանապարհով՝ կախված պատմական, մշակութային, տնտեսական և քաղաքական առկա նախադրյալներից: Ուստիև տվյալ պետությունում էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման միտումները լիարժեք ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է բացահայտել ավանդական քաղաքական ինստիտուտների առանձնահատկությունները: Վերջիններս, ըստ էության, որոշում են էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման հիմնական

միտումները՝ հարմարեցնելով դրանք հասարակական և քաղաքական հարաբերությունների առկա մշակույթին: Միևնույն ժամանակ, էլեկտրոնային քվեարկությունը և էլեկտրոնային ժողովրդավարությունը հասարակության և կառավարության միջև փոխազդեցության ժամանակակից ձևեր են: Այդ փոխազդեցության կենսունակությունն ու հաջողությունը կախված են տվյալ երկրում տեղեկատվական հասարակության զարգացման մակարդակից: Այնտեղ, որտեղ քաղաքական ինստիտուտները պահպանել են սոցիալ-քաղաքական իրենց ազդեցությունը, էլեկտրոնային ժողովրդավարությունը չի ապացուցել իր արդյունավետությունը:

3. «Էլեկտրոնային ժողովրդավարությունը» Հայաստանում իր ձևավորման սկզբնական փուլում է: Խոսքը ընտրողների էլեկտրոնային գրանցման մասին է միայն,այլ ոչ թե քվեարկության, ինչն էլ իր հերթին ներառում է գրանցված տվյալների կեղծման ռիսկերը: Հայաստանում ցանցային քվեարկությունը վերաբերում է միայն դիվանագիտական ներկայացուցիչների որոշակի փակ շրջանակին: Ակնհայտ է, որ Հայաստանում անհրաժեշտ են իրավական և համակարգային տեխնոլոգիական լուրջ բարեփոխումներ՝ «էլեկտրոնային քվեարկության» գործիքների կիրառման միջոցով ընտրությունների թափանցիկության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

4. Ձևավորվել է մեդիա-քաղաքական հարաբերությունների նոր կառուցվածք, որտեղ մեդիան հանդես է գալիս որպես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, հասարակական կարծիքի վրա ազդելու գաղափարախոսական անհրաժեշտ տարածք, քաղաքական կարգի որոշակի կառուցվածք նախագծելու և համաշխարհային քաղաքական գործընթացների վրա ազդելու հիմնական գործիք: Սոցիալական մեդիան արագորեն քաղաքականացվում է. այն օգտագործվում է ընտրողներին մոբիլիզացնելու, ոչ քաղաքական և քաղաքական բողոքի ցույցերը համակարգելու, ինչպես նաև կեղծ լուրեր տարածելու համար, որոնք հաճախ քանակապես գերազանցում են օբյեկտիվ տեղեկատվության աղբյուրներին: Անհերքելի է սոցիալական մեդիայի, մասնավորապես «Facebook»-ի առաջատար դերը ՀՀ-ում զանգվածային բողոքի ակտիվության առաջացման և տարածման գործում: Որոշ սոցցանցեր, ինչպես, օրինակ, «Telegram»-ը, լրատվամիջոցների ազդեցության նշանակալի հարթակներ են Հայաստանում, և այս համատեքստում գլխավոր խնդիրը հայկական մեդիա դաշտի իրավական կարգավորումն է:

5. Կիբեռանվտանգությունը ցանկացած պետության ազգային անվտանգության առանցքային գործոններից մեկն է: Հիբրիդային պատերազմի պայմաններում գտնվող Հայաստանի համար, երբ կիրառվում է ժամանակակից

տեղեկատվական տեխնոլոգիաների ողջ զինանոցը, այս խնդիրը առանձնահատուկ նշանակություն է ստանում: ՀՀ ներքին թվային հատվածը խոցելի է տվյալների պաշտպանության և տեղեկատվական կառուցվածքի առումներով: Հայաստանի տեղեկատվական հասարակության զարգացման ներկա փուլում պետական մարմինների սեփականություն հանդիսացող կամ վերահսկվող անձնական տվյալների հուսալի պաշտպանության ապահովումն արդիականացնելու, ինչպես նաև հասարակության թվային գրագիտությունը բարձրացնելու նպատակով իրականացվող աշխատանքները հանդիսանում են ՀՀ պետական քաղաքականության անկյունաքարը: Կարևորագույն նշանակություն ունեն տեղեկատվական ռեսուրսների և բնակչության անձնական տվյալների պաշտպանությունը համակարգող ազգային կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծման ջանքերը:

6. ՀՀ-ում իշխանամետ, ընդդիմադիր և ազատ լրատվամիջոցները և սոցիալական ցանցերը նպաստում են բնակչության քաղաքական ակտիվությանը, ինչը հանգեցնում է հասարակության բևեռացմանը և որոշակի հարցերի շուրջ լարվածության սրմանը: Ֆեյսբուքի հայկական տիրույթում դիսկուրսը երբեմն հրահրվում է քաղաքական գործիչների կողմից՝ ունենալով քաղաքական ընդգծված ենթատեքստ: Դա առավել ակնհայտ դրսևորվեց 44-օրյա պատերազմի ժամանակ՝ պահանջելով խնդրի համակարգային կարգավորում պետական մակարդակով: Այս համատեքստում սոցիալական ցանցերում տեղեկատվական պատասխանատվության ապահովմանը և ապակառուցողական բովանդակության տարածումը կանխելուն ուղղված իրավական մեխանիզմների մշակումը դառնում է ավելի ու ավելի կարևոր:

7. Մերօրյա քաղաքական տարածքում սոցիալական ցանցերը դառնում են քաղաքացիների հանրային հաղորդակցության և քաղաքական մասնակցության նշանակալի գործիք՝ մի կողմից խթանելով ժողովրդավարացման գործընթացը, մյուս կողմից ապակայունացնելով քաղաքական գործընթացները: Այս առումով անհրաժեշտ է մշակել համապարփակ մոտեցում, որը համատեղում է տեխնոլոգիական զարգացման, իրավական կարգավորման և թվային միջավայրում պատասխանատու քաղաքական մշակույթի ձևավորման տարրերը:

8. Հայաստանը հետևողականորեն կառուցում է համապարփակ, թափանցիկ և քաղաքացիակենտրոն էլեկտրոնային կառավարման էկոհամակարգ՝ հենվելով առաջադեմ թվային ռազմավարությունների ներդրման վրա: Եթե ՀՀ կառավարության 2017–2022 թթ. ծրագիրը հիմնականում կենտրոնացած էր պետական հաստատությունների թվային ձևաչափերի անցման վրա, ապա 2021–2025 թթ. թվայնացման ռազմավարությունն ապահովեց ազգային թվային

տվյալների կառավարման ճարտարապետության կառուցումը: Իր հերթին, ՀՀ կառավարության 2021–2026 թթ. ծրագիրը առաջնահերթություն է տալիս էլեկտրոնային օգտատերերի ստուգման համակարգի մշակմանը՝ այն դիտարկելով որպես էլեկտրոնային գործարքների և փոխազդեցությունների անվտանգությունն ապահովող հիմնարար գործիք: Այս ոլորտում պետական քաղաքականության ամենակարևոր ոլորտներից են էլեկտրոնային կառավարման ծառայությունների միասնական հարթակի ձևավորումը, կիբեռանվտանգության իրավասության կենտրոնի ստեղծումը, էլեկտրոնային հարկային հաշվետվությունների մեխանիզմների կատարելագործումը և թվային առողջապահական համակարգի զարգացումը: Թվային փոխակերպման և քաղաքական կառավարման արդիականացման առանցքային պայմաններից մեկը մարդկային մտածողության հետ աշխատելն է՝ թվային կառավարման և հանրային գիտակցության ձևավորումը, թվային նախաձեռնությունների նկատմամբ վստահության մշակումը, նորարարությունների ընկալման հոգեբանական և մշակութային խոչընդոտների հաղթահարումը: ՀՀ-ում թվային փոխակերպումը պահանջում է ոչ միայն տեխնոլոգիաների արդիականացում, այլև արժեքային կողմնորոշումների մշակում, որոնք նպաստում են թե՛ պետական ինստիտուտների, թե՛ քաղաքացիական հասարակության պատրաստակամությանը՝ ներդնելու և ընդունելու կառավարական նոր որոշումներ և վերափոխելու քաղաքական մտածողության առկա մոդելները: Կարևոր է կենտրոնանալ ոչ միայն նոր տեխնոլոգիաների ներդրման, այլ նաև պայմանների ստեղծման վրա, որոնց առկայության դեպքում այդ տեխնոլոգիաները կդառնան հասանելի, հասկանալի և սոցիալապես նշանակալի բոլոր քաղաքացիների համար: Միայն այս մոտեցման շնորհիվ թվայնացումը կդառնա քաղաքական և վարչական համակարգի արդիականացման գործիք: Այս համատեքստում, բացի տեխնոլոգիական գործոններից, առանձնակի կարևորություն ունեն քաղաքական այնպիսի գործոններ, ինչպիսիք են քաղաքական կամքի դրսևորման աստիճանը, արժեքները վերաիմաստավորելու ունակությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. **Карамян И.А.** Информатизация электорального процесса в контексте формирования электронной демократии (опыт Армении) //Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2019. № 2 (32). С. 69-83.URL: https://elibrary.ru/contents.asp?id=42201277

2. **Карамян И.А.** Имплементация информационных технологий в контексте вызовов информационной безопасности Армении// Вестник инженерной академии Армении (ВИАА). Военно-инженерные проблемы и политические аспекты коллективной безопасности. 2020. Т.17. № 2. С. 276-280. URL: https://d4c50301-bb27-4f18-87f4-01386afa4c39.filesusr.com/ugd/fd4391_f14a7ce74e174d59a7b55e763f09a501.pdf
3. **Карамян И.А.** COVID-19 и цифровизация // Материалы научной конференции «Международная безопасность: новые угрозы и вызовы» // Изд-во Институт энергетической безопасности. Ереван. 2020. С. 68-71. URL: https://artsakhlib.am/ru/2020/07/30/covid-19
4. **Карамян И.А.** Проблемы цифрового управления политическими процессами в условиях пандемии // Материалы научной конференции «Международная безопасность: новые угрозы и вызовы» // Изд-во Институт энергетической безопасности. (Ереван, 15 декабря 2020 г.) С. 43-53.
5. **Саркисян О.Л., Оганесян Т.А., Дунамалян Н.А., Карамян И.А.** Гражданская идентичность в Армении (обзор глубинного экспертного интервью) // Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2021. № 2 (38). С. 7-18. https://elibrary.ru/contents.asp?id=48044540&selid=48044541
6. **Карамян И.А.** Трансформация идентичности в информационном обществе // Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2021. № 2 (38). С. 27-31. URL: https://elibrary.ru/contents.asp?id=48044540
7. **Карамян И.А.** Феномен политизации политическх сетей: сравнительный анализ // Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես. Երևան. 2021. թիվ 1(12). էջ 91-99 URL: https://generalnews.am/hy/archive
8. **Карамян И.А.** О восприятии гражданской идентичности как лояльности государству (на примере России и Армении) // Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2022. № 3 (42). С. 44-50. URL: https://elibrary.ru/contents.asp?id=50201090
9. **Давтян В.С., Карамян И.А.** Диверсификация внешних маршрутов интернет-трафика Армении в контексте обеспечения цифрового суверенитета // В сборнике: Власть и элита в эпоху цифровой трансформации: новые вызовы и угрозы, траектории социально-политического развития современного общества. Материалы Четвертого Всероссийского элитологического конгресса с международным участием. Ростов-на-Дону, 2022. С. 198-205. URL: https://elibrary.ru/item.asp?id=48379034

10. **Карамян И.А.** Проблемы развития цифровых инфраструктур Армении в рамках реализации инициативы «Цифровой шелковый путь» // В сборнике: Цифровая трансформация социальных и экономических систем. Материалы международной научно-практической конференции. Отв. редактор И.А. Королькова. Москва, 2023. С. 102-111.
URL: https://www.muiv.ru/lp/conf_fit_2023/download/conf-fit-2023-sbornik.pdf
11. **Саркисян О.Л., Дунамалян Н.А., Саргсян Д.О., Хачатрян С.О., Карамян И.А., Оганесян Т.А.** Развитие гражданской идентичности в Республике Армения: тенденции, вызовы, риски // коллективная монография. Ответственный редактор О.Л. Саркисян. Рецензенты: Мчедлова М.М., Енгоян А.П. –Ер.: Изд-во РАУ, 2023. - 258 с., С. 203-212 URL: https://elibrary.ru/item.asp?id=67260043
12. **Карамян И.А.** Цифровизация государственного аппарата Республики Армения: текущее состояние, вызовы и перспективы развития // Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки. 2025. № 3 (54). С. 137-154. DOI: 10.24412/1829-0450-2025-3-137-154
URL: https://vestnik.rau.am/page/1760569515-vestnik-seriya-gumanitarnye

КАРАМЯН ИРИНА АРТУРОВНА

«ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ НОВЕЙШИХ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ»

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук
по специальности 23.00.02 «Политические институты и процессы».
Защита состоится 12 февраля 2026 г., в 15:30 часов
на заседании действующего в ЕГУ специализированного совета
056 «Политология и международные отношения»
МОНКС КВОН РА
(адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна 1).

РЕЗЮМЕ

В дисертационном исследовании рссматриваются особенности применения новейших информационно-коммуникационных технологий в системе современного политического управления Республики Армения. Анализируется влияние цифровизации и интернет-коммуникаций на трансформцию управленческих практик, политической коммуникации и механизмов взаимодейтвия государства и общества. Особое внимание уделяется рискам и ограничениям, связанным с манипуляцией общественным сознанием, информационной безопасностью и нормативно-правовым регулированием цифровой среды. На основе теоретических подходов и эмпирического материала выявляется спцифика армянского опыта внедрения цифровых технологий в политико-управленческие процессы. Обосновывается необходимость комплексного подхода к модернизации политического управления, сочетающего технологическое развитие, институциональные изменения и фирмирование цифровой политической культуры.

Целью данной исследовательской работы состоит в выявлении специфики применения информационных технологий в современных управленческих процессах и в определении основных трудностей и проблем, сопровождающих их внедрение в политической практике Республики Армения.

Во «Введении» обосновывается выбор темы и ее актуальность, определены объект и предмет, цель и задачи, а также методологические основания исследования. Представлены степень научной разработанности темы,

эмпирическая база исследования, научная новизна, теоретическая и практическая значимость исследования.

Первая глава работы «Теоретико-методологические основы исследования процессов коммуникации в политическом управлении» состоит из трех параграфов и посвящена рассмотрению основных подходов к определению понятия «информационные технологии», его соотношению с понятиями «технологии» и «политические технологии», становлению «информационного общества» как результата Четвертой промышленной революции, а также ключевых особенностей политического управления как процесса информационно-коммуникационного регулирования современных общественных отношений.

Вторая глава работы «Цифровые инструменты коммуникационного воздействия на общественное сознание в политическом управлении» состоит из двух параграфов и посвящена анализу цифровых инструментов коммуникационного воздействия на общественное сознание в системе современного политического управления. В ней рассматривается феномен электронной демократии как формы институциализированного взаимодействия государства и граждан, а также выявляются основные проблемы и ограничения ее практического применения. Особое внимание уделяется трансформации политической коммуникации под влиянием цифровых технологий и интернет-платформ. Рассматриваются технологии манипулирования общественным сознанием в онлайн-пространстве, используемые в качестве инструментов политического управления.

В третьей главе «Применение информационных технологий в политических процессах Армении» рассмотрены проблемы реформирования системы политического управления в Республике Армении на современном этапе в условиях цифровизации, а также проанализирована роль информационных технологий и социальных сетей в кризисном управлении политическими процессами в Армении.

В «Заключении» отражены основные результаты исследования, имеющие теоретическое и практическое значение.

KARAMYAN IRINA

"ISSUES IN IMPLEMENTING ADVANCED INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES WITHIN THE MODERNIZATION OF POLITICAL GOVERNANCE IN THE REPUBLIC OF ARMENIA"

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes",
aspiring to earn Ph. D in Political Sciences.
The defence of the dissertation will take place on February 12, 2026 at 15:30
at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations"
of the RA MOESCS HESC, operating at Yerevan State University
(Adress: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian)

SUMMARY

This dissertation examines the specific features of applying advanced information and communication technologies within the system of contemporary political governance in the Republic of Armenia. The study analyzes the impact of digitalization and internet-based communication and mechanisms of interaction between the state and society. Particular attention is paid to the risks and limitations associated with the manipulation of public cosciousness, information security, and the regulatory framework of the digital environment. Based on theoretical approaches and empirical data, the research identiffies the distinctive characteristics of Armenia's experience in implementing digital technologies in political and administrative prosesses. The study substantiates the necessity of a comprehensive approach to the modernization of political governance that combines technological development, institutional transformation and the formation of digital political culture.

The purpose of this research is to identify the specifics of the application of information technologies in modern governance processes and to determine the main challanges and problems accompanying their implementation in the political practice of the Republic of Armenia.

The Introduction outlines the relevance of the topic, the object and subject of the research, the purpose and objectives of the dissertation, its methodological and empirical basis, the degree of development of the research topics, as well as its scientific novelty and practical significance.

The first chapter of the research, entitled «Theoretical and Methodological Basis of the Research of Communication Processes in Political Governance» consists of three sections and examines the main approaches to defining the concept of "information technology", its correlation with the "political technologies" and "information and communication technologies", the formation of the "information society" as a result of the Fourth Industrial Revolution, as well as the key features of political governance as a process of information and communication regulation of modern social relations.

The second chapter of the research, entitled "Digital Tools of Communication Influence on Public Consciousness in Political Management" consists of two sections and examines digital tools of communication influence on public consciousness within the system of modern political management. The chapter analyzes the phenomenon of electronic democracy as a form of institutionalized interaction between the state and citizens, and identifies the main problems and limitations of its practical application. Particular attention is paid to the transformation of political communication under the influence of digital technologies and internet platforms. The chapter also examines technologies for manipulating public consciousness in the online space, used as instruments of political governance.

The third chapter of the research, entitled «The Application of Information Technologies in Political Processes in Armenia» consists of three sections and examines the problems of reforming the political governance system in the Republic of Armenia at the present stage in the context of digitalization, as well as the role of information technologies and social networks in crisis management of political processes in Armenia.

The Conclusion summarizes the main results of the study, which are of both theoretical and practical significance.